ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 8-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը, իսկ քարոզում է տ. Մասիս արդ. Գալստյանը՝ «Երանելի սուրբ առաքեալք, հրաւիրեալք ի սկզբանէ և ընտրեալք յորովայնէ» շարականի բառերով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 7-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանում, հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

* * *

Դեկտեմբերի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Վազգեն վրդ. Թադոյանը և խոսում հրաժեշտի իր քարոզը՝ Կալկաթայի հայոց հոգևոր հովիվ նշանակվելու առիթով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 14-ին, հինգշաբթի.—Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ Մայր Աթոռի միաբան տ. Վազգեն վրդ. Թադոյանը, որը նշանակվել էր Կալկաթայի հայոց հոգևոր հովիվ, այսօր մեկնեց իր պաշտոնատեղին: Տ. Վազգեն վրդ. Թադոյանը Հայոց Հայրապետի օրհնություններն ու ողջույնները կհաղորդի նաև ինչպես Կալկաթայի, այնպես էլ ամբողջ հնդկահայ համայնքին, եկեղեցական խորհուրդներին և հավատացյալ հայ ժողովրդին:

* * *

Դեկտեմբերի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 18-ին, երկուշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում սկսվեցին 1972—1973 ուսումնական տարվա առաջին կիսամյակի բանավոր ու գրավոր քննությունները, որոնք կտևեն մինչև դեկտեմբերի 29-ը:

* * *

Դեկտեմբերի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից հրաժեշտ է առնում Իրաքի թեմի առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանը, որը շուրջ մեկ

ամիս ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում, և մեկնում Բաղդադ՝ իր պաշտոնատեղին:

*
* *

Դեկտեմբերի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալիոզյանը: Քարոզում է տ. Մասիս աբդ. Գալստյանը՝ «Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի» բնաբանով (Ղուկ. ԺԸ 14):

*
* *

Դեկտեմբերի 29-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանում, հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, գումարվում է Դերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Դեկտեմբերի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս աբդ. Գալստյանը, իսկ քարոզում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ «Ո՛վ Տէր, այս ամ ևս ի լրումն հասցուցեր» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: